նը։ Գիւանները անծանօթ են իրենց վերաբերեալ հին գործառնութեանց. ծիծաղելի գիրքի մէջ կը գնեն ժողովներն ու Պատրիարքը։ Թղթակցութեան, կրկնուած թղթակցութեանց պատասխանները յապաղում. պաշտօնագիրները կորուստ, եւն. եւն., այսօր շատ սովորական դէպքեր են Պատրիարքարանի կազմակերպութեան մէջ։ Առանց բանը չկային Օրմանեանի առեն։ Մի կարծէք որ այս տողերով ջատագով եղած ըլլամ Օրմանեանի։ Ո՛չ։ Օրմանեանի համար չէ, ճշմարտութեան համար է, որ կը խօսիմ։ Դաշնակցութեան *տականքները* «անհատական հանգամանքով» ըլլայ, թէ «պաշտօնական որոշումով», թող չահատակեն, որչափ կուզեն։ Այսօր ժողովուրդն ամեն տեղ հասկցած է Ծապլվարեան հերոսներու *տակտիկան*, որոնք ուզեցին ամէն կողմն ապականել. անբարոյացուցին ուսանողները, անպարկեշտացուցին երիտասարդները, ամօթի զգացումը փճացուցին մեծի և փոքրի վերաբերութեան մէջ։ Այա-Ստեֆանոի մէջ դաշնակցական տղոց վերջին խլրտումն անգամ մ'ալ բացաւ բարի ժողովուրդին աչքը, և գաւառներուն մէջ իսկ դայրոյթ պատճառեց անոր։ Քանի որ Օրմանեանը ձեր խելքով անարժան մ' է, Անզգութներ, Ս. Պատրիարքին, դուք ինչ գործ ունիք եկեղեցոյ մէջ, անարժան մարդու պատարագին. ամէն մարդ իր խղճին տէրն է. ինչ իրաւունք ունիք ուրիշներու խիղճը խանգարելու։ Մի երթաք Օրմանեանի պատարագին, մի լսէք անոր քարոզը. ո՞վ կը ստիպէ ձեզ։ Բայց նաև ո՞վ իրաւունք կուտայ ձեզ զրկելու այն ժողովուրդն, որ կուզէ և կերթայ լսել Օրմանեանը։ Ուզողը թող երթայ, և եթէ մարդ չերթայ, ան ալ անշուշտ չելլեր պատարագելու—Բայց շատ նշանակելի է որ ասոնք կը սիրեն *անզգամ* ըլլալ, և մի իմաստակ, զգուած իր հայրենի կոչումէն և անունէն, ինքզինքը կանուանէ *Անզգամ* որ կը նշանակէ մարդկային ամէնէն տարրական, բարի. առաքինական զգացումէ անանկ ըլլալ, բարեկրթութիւն, յարգանք բառած ազնական յատկութիւններն ուրանալ։ Դաշնակցութեան *տականքներն* են, որ հրապարակաւ հռչակելով իրենց *անզգամութիւնն* ու *անամօթութիւնը*, ո՛վ բարի Հայ ժողովուրդ, քու անունդ չարաչար կը գործածեն, օր մը Վարչութ. ատենապետին գլուխը կը պատռեն արիւնլուայ, օր մը եկեղեցւոյ մէջ եկեղեցականի մը պատարագը կուզեն արգիլել քու անունովդ։ Ալ հերիք է, մինչև ցոյց տուր թէ դուն գիտես իրաւունքներդ պաշտպանել և երբէք չես ներեր որ *անզգամներ ու անամօթներ* աղարտեն քու պատիւդ, չահագործեն անունդ և իրաւունքդ։

«Բիւզանդիոն»

ԾՐԱԳԻՐ

ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ 1500-ԱՄԵԱԿԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

(Ս. Էջմիածնի Յոբելենական Յանձնաժողովի կազմած)

—

1. Բոլոր եկեղեցիներում սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 7-ին՝ կիրակի օրերը՝ նախօրօք ծանուցում անել ժողովրդին հոկտեմբերի 13—14-ին կատարուելիք հանդէսների մասին։

2. Հոկտեմբերի 13-ին, շաբաթ, Թարգմանչաց տօնի օրը՝ հանդիսաւոր պատարագ մատուցանել և քարոզի մէջ բացատրել երկու մեծ տօների պատմական նշանակութիւնը. գրուատելով ս. Մեսրոպի, ս. Սահակի, Թարգմանչաց և տպագրութեան արուեստի գլխաւոր վաստակաւորների յիշատակը։

Պատարագից յետոյ Հոգեհանգիստ հայ գրականութեան և տպագրութեան վաստակաւորների համար։

Պատարագին և հոգեհանգստեան ներկայ են լինում եկեղեցական, դպրոցական և ազգային հաստատութիւնների ներկայացուցիչներ ու վարչութիւններն ամբողջ կազմով աշակերտութեան հետ։

3. Հոկտեմբերի 14-ին՝ կիրակի՝ հանդիսաւոր պատարագ և ապա Հայրապետական մաղթանք նոյն կազմով։

Պատարագից յետոյ՝ ցերեկը կամ երեկոյեան՝ տեղական յարմարութեան համաձայն՝ կատարւում է դպրոցական հանդէս եկեղեցական, կրթական և այլ ազգային հաստատութեանց պաշտօնատար անձանց ներկայութեամբ։ Հանդէսը բացւում է «Հայր մեր»-ով և «Նմանեալ Մովսէսի» Թարգմանչաց շարականով։ Լինում են պատշաճ բանախօսութիւններ տօնի նշանակութիւնը բացատրող, մէջ ընդ մէջ ոտանաւորներով, երգերով և նուագածութեամբ, ուր հնարաւոր է։

Հանդիսի սկզբում կամ վերջում աշակերտութեան ձրիապէս բաժանւում են Մայր Աթոռի այդ առթիւ հրատարակած հանրամատչելի գրքոյկները։ Դպրոցական վարչութիւնները կարող են իրենց կողմից ևս յարմար նուէրներ՝ գրքեր, պատկերներ տալ սաներին։

Ծանօթ. շատ եկեղեցիներ ունեցող կենտրոններում եկեղեցական հանդէսները կարող են կատարուել մի կամ մի քանի եկեղեցիներում Հոգևոր Վարչութեան կարգադրութեամբ։

——

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ԾՐԱԳԻՐԸ

ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ 1500-*ԱՄԵԱՅ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ* 400-*ԱՄԵԱՅ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԻ*

—

Ուրբաթ հոկտեմբերի 12-ին երեկոյեան ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ հանդիսաւոր թափորով իջնում է

Մայր Տաճար, ուր տեղի կունենայ նախատօնակ ս. Թարգմանչաց յիշատակին։

Շաբաթ (ս. Թարգմանչաց տօնին՝ հոկտեմբերի 13-ին) հանդիսաւոր գնացք ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.-ԲԴ Կաթողիկոսի յՕշական՝ ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորութիւնների։

Պատարագ ս. Մեսրոպի գերեզմանի վրայ։

Հայրապետական մաղթանք։

Պատարագից յետոյ պատգամաւորների բանախօսութիւններ, հեռագրերի և ուղերձների ընթերցում Ս. Մեսրոպայ եկեղեցու բակում։

Կիրակի, հոկտեմբերի 14-ին, Մայր Տաճարի Իջման սեղանի վրայ հանդիսաւոր պատարագ, ապա հոգեհանգիստ դրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։

Նոյն օրը պատարագից յետոյ կլինի ցերեկոյթ երաժշտութեամբ և երգեցողութեամբ։

Շաբաթ և կիրակի երեկոները հրավառութիւն և երաժշտութիւն Վանքի և Ճեմարանի բակում։

———

Այս ծրագրով սկսուելու է Յոբելենական տարին 1912 թ. հոկտեմբերի 13-ից—1912 թ. հոկտ. 12. բոլոր եկեղեցիներում, դպրոցներում և այլ ազգային հաստատութիւններում։

Յոբելենական տարուայ ընթացքում դպրոցներում և այլ ազգային հաստատութիւնների մէջ կազմակերպուելու են երեկոյթներ, ցերեկոյթներ, համերգներ, դասախօսութիւններ ժողովրդի և աշակերտութեան համար, այլև էքսկուրսիաներ դէպի Օշական։

Տարուայ ընթացքում լինելու է ժողովարարութիւն և դրամական նուիրատուութիւններ յօգուտ դպրոցական ֆօնդի։

Տարին փակուելու է 1913 թ. հոկտ. 3-ին ս. Թարգմանչաց տօնին, ս. Էջմիածնում մեծ հանդիսաւորութեամբ, ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ՄԵԶԱՆՈՒՄ

—

Հայ գեղարուեստական գրականութիւնը իր պատմութեան սկզբից մինչև հիմա՝ իր անհիւրընկալ միջավայրի մէջ, դատապարտուել է այնպիսի անհամ դրութեան, ենթարկուել է այնպիսի ցուրտ հգնաժամի, իր անբաղդ գոյութիւնը քարշ է տուել այնպիսի նեղ ու հիւանդ պայմաններում, որ ապահովաբար հայ գրականութեան ապագայ պատմագիրը սոսկումով պիտի արձանագրի և մատնանիշ անի այդ ցաւոտ իրողութիւնների մասին։

Մեր նիւթից դուրս կը լինէր անչուշտ երկար կանգ առնել փաստերի առաջ՝ հաստատելու համար վերի՝ մեր առաջ բերած չատ հիմարիտ, պարզ ու ընդունուած կարծիքը, որ ամեն բոպէ յեղյեղուում է հայ գրականութեան հորիզոնի վրայ։ Ինչ որ իրողութիւն է, փաստի անկարօտ է արդէն։ Անուրանալի ճշմարտութիւն է նոյնպէս, որ մեր հայ հեղինակը, չնայած չրջապատող ծանր պայմաններին և իր աննախանձելի դրութեան, ամեն զոհողութեամբ աշխատել է միշտ բարձր պահել իր վեհ ու նուիրական կոչումը։ Բայց ինչ որ ամենէն աւելի ցաւալին է, դա բարոյական զրկանքն է հայ հեղինակին՝ մեր մատենախօսների կողմից։

Արդի իրականութեամբ առած՝ մեր մատենախօսութիւնը դարձել է սեռակ մը քմահաճ, նեղ, կողմնակի և հիւանդ դատողութիւնների ասպարէզ։ Մեր մատենախօսները գրում են ոչ թէ գործ մը իր էութեանը մէջ ճանչնալու, նրա լաւ ու պակասաւոր կողմերը ցոյց տալու և արժանիք մը իրապէս գնահատելու համար, այլ լոկ գրած ըլլալու համար։ Խօսքս մասնաւորեցնում եմ Ս. Ց.-ին, «Հովիտ» № 32 ի մէջ արած իր մատենախօսութեան առթիւ։ Պ. յօդուածագիրը մէջ բերելով Յակոբ Յակոբեանի «Իմ աշխարհ»-ից քանի մը հատ ու կտոր նախադասութիւններ, ուզում է ասել, որ ինք՝ հասկացել է բանաստեղծին, ըմբռնել է նրա հոգեկան աշխարհը, ձայնակցել է էութեան խորքէն նրա չեչտերին. և այսպէս ուզում է մի դին դնել նրա արժանիքին։ Մինչդեռ միամիտ պարոնը մոռանում է, որ «բանաստեղծը ըմբռնել, հասկանալ նրա հոգիի բովանդակ հուրքն ու հրայրքը—անկարելի է չայրած կամ գոնէ չմխացող սրտերի համար»։

Ու այսպէս պ. Ս. Ց.-ի (որ զուրկ է բանաստեղծական ամենաչնչին ներշնչումից իսկ) ասածով՝ Յակոբ Յակոբեանի երգած ու նուագածը մի բանի նման չի, որովհետև *զգացմունքո՛վ* չի երգում, որովհետև *սրտո՛վ* չի նուագում, որովհետև նրան զօրով են կապել Պառնասի գագաթից, որովհետև նա *զօրո՛վ* է կապուել ամբոխին և *զօրո՛վ* է երգում նրա արամագրութիւնը։ Բայց ես հաւատացած եմ միայն, որ եթէ պարոնը զօրով անուանական մատենախօսի վերարկուն հագած չլինէր և խնդրին մօտենար ճշմարիտ քննադատի մը վայել լրջութեամբ ու ձեռնհասութեամբ, երբէք թոյլ չէր տալ իրեն անել այդ անհեթեթ ու անտրամաբան դատողութիւնները Յ. Յակոբեանի մասին։

Մարդ ուզղակի չուարած է մնում, թէ ինչու մատենախօս պարոնը այլ կերպ է հասկանում, այլ մտքով է բացատրում գրուածքի իսկական նշանակութիւնը։ Եւ մթթէ այս աքանչելի կտորը—ուր կարելի էր գտնել իր անհիմն դատողութիւնների արամաբանական ժխտումը, և որը ամենասիրուն ցոյցումն է բանաստեղծի հոգեկան արամագրութեան, նրա ներքին աշխարհի գունագեղութեան—մի այդպիսի միտք է արտայայտում դէպի ամբոխը, երբ երգում է.

Հոգիս ձուլուած է նրա հոգու մէջ,
Ջղերս կապուած նրա ջղերին,
Մի այլ ճանապարհ